ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ
ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИ МАРЗ
ЭЧМИАДЗИНСКИ РЕГИОН
СЕЛЬСКАЯ ОБЩИНА АМБЕРД

N 01-92
«04» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011թ

ՀԵՌ.(093) 32-59-62
ТЕЛ.(093) 32-59-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝ Ա. Ղահրամանյան

Կից ներկայացնում ենք Ձեզ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքի ղեկավարի 2011թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում ընդունած որոշումները և հայտնում ենք այն մասին, որ սույն ամսվա ընթացքում արձակած կարգադրություններ չկան:

Առդիր 9 թերթ:

Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար Լ. Վարդանյան

04702098

10

9583-11
10 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 14-Ա

«07» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2011Թ. — Գ. ԱՄԲԵՐԴ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1995 թվականի հուլիսի 6-ի թիվ 446-Ն հրամանի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի օգոստոսի 24-ի թիվ 01/07,2/2550-11 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքում արտակարգ իրավիճակների և ռազմական դրությունների ժամանակ, համայնքի բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման և համակարգման նպատակով, ստեղծել քաղաքացիական պաշտպանության շտաբ:
2. Հաստատել քաղաքացիական պաշտպանության շտաբի կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար — Լ. Վարդանյան

2011 թվականի սեպտեմբերի 7
գ. Ամբերդ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿ[illegible] 201[illegible] ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի
ԹԻՎ 14 -Ա ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ԿԱԶՄԸ

1. Քաղաքացիական պաշտպանության շտաբի հրամանատար-Մանվել Բաբայան
2. Համալիր փրկարարական խումբ՝ - հրամանատար – Սարգիս Ճուղուրյան
3. Ճառագայթային և քիմիական դիտարկման կետեր համայնքներում- հրամանատար- Ժան Սարգսյան
4. Կապի ջոկեր- հրամանատար- Նազան Սարգսյան
5. Անհատական պաշտպանության միջոցների բաշխման կետեր- հրամանատար-Արտյոմ Գրիգորյան
6. Հասարակական կարգի պահպանման խմբեր- հրամանատար-Աշոտ Գաբրիելյան
7. Գյուղատնտեսական կենդանիների և բույսերի պաշտպանության խմբեր- հրամանատար-Կարեն Հովհաննիսյան
8. Բժշկական օղակ-հրամանատար-Գայանե Ղազարյան
9. Տարահանման հանձնաժողովի նախագահ- Լևիկ Վարդանյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

## ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13-Ա

---

«07» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2011Թ. Գ. ԱՄԲԵՐԴ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ (ԸՆԴՈՒՆՄԱՆ) ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 746 որոշմամբ և հիմք համարելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի օգոստոսի 24-ի թիվ 01/07,2/2550-11 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքում ստեղծել տարահանման (ընդունման) հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ամբերդ համայնքի ղեկավարի
պաշտոնակատար Լ. Վարդանյան

2011 թվականի սեպտեմբերի 7

գ. Ամբերդ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի
ԹԻՎ 13 -Ա ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ (ԸՆԴՈՒՆՄԱՆ) ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԸ

1. Հանձնաժողովի նախագահ, քաղաքացիական պաշտպանության պետի տեղակալ- Լևիկ Վարդանյան-համայնքի ղեկավարի տեղակալ
2. Հանձնաժողովի նախագահի տեղակալ-Գարուշ Ղարիբյան
3. Հանձնաժողովի քարտուղար- Սամվել Սարգսյան-քարտուղար
4. Տարահանվողների (տարահանվածների) հաշվառման խմբի պետ-Գայանե Նավասարդյան
   անդամներ-Օնիկ Խուդոյան
   անդամներ- Ռուբիկ Տիգրանյան
5. Տրանսպորտային ապահովման խմբի պետ-Ավետիք Ալեքսանյան
   անդամներ-Հայրապետ Ստեփանյան
   անդամներ-Մանվել Գևորգյան
6. Նստեցման (տեղաբաշխման) կետի պետ-Անահիտ Ադամյան
   անդամներ-Համլետ Ալեքսանյան
   անդամներ-Արայիկ Թադևոսյան
7. Բժշկական ապահովման խմբի պետ-Գայանե Ղազարյան
   անդամներ-Համլետ Գրիգորյան
   անդամներ-Արուսյակ Հարությունյան
8. Հասարակական կարգի պահպանման խմբի պետ-Աշոտ Գաբրիելյան
   անդամներ-Տիգրան Մնացականյան
   անդամներ-Արթուր Գեղամյան
   անդամներ-Ավետիս Դավթյան
   անդամներ-Աբրահամ Մանգասարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12-Ա

«07» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2011Թ. Գ. ԱՄԲԵՐԴ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի N 1532-Ն որոշման պահանջներից, և Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի մասին օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով և հիմք համարելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի օգոստոսի 24-ի թիվ 01/07.2/2550-11 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղակն համայնքի ղեկավարի 2008 թվականի հուլիսի 29-ի «Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքի քաղաքացիական պաշտպանության կազմավորումների կազմը» թիվ 39-Ա որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություն, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ցանկը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Որոշման մեկական օրինակը հանձնել կազմավորումների հրամանատարներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար Լ. Վարդանյան

2011 թվականի սեպտեմբերի 7
գ. Ամբերդ

04702098

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի
ԹԻՎ 12 -Ա ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ

1. Համալիր փրկարարական խումբ՝ - հրամանատար –Սարգիս Ճուղուրյան
   անդամներ-Գալուստ Թադևոսյան
   անդամներ- Յուրիկ Սարգսյան
   անդամներ-Գոռ բաբայան
   անդամներ- Հայկ Սարգսյան
   անդամներ- Կառլոս Գաբրիելյան
   անդամներ-Արայիկ Սուքիասյան
   անդամներ- Հայկ Խուդոյան
   անդամներ-Գևորգ Խուդոյան
2. Ճառագայթային և քիմիական դիտարկման կետեր համայնքներում- հրամանատար-Ժան Սարգսյան
   անդամներ- Ռուստամ Ղարիբյան
   անդամներ-Արսեն Կարապետյան
3. Կապի ջոկեր- հրամանատար-Նազան Սարգսյան
   անդամներ- Ռոմիկ Ասատրյան
   անդամներ-Արման Սարգսյան
4. Անհատական պաշտպանության միջոցների բաշխման կետեր- հրամանատար- Արտյոմ Գրիգորյան
   անդամներ-Արայիկ Գրիգորյան
   անդամներ-Արման Սարգսյան
   անդամներ-Արմեն Սարգսյան
   անդամներ-Ռոմիկ Ասլանյան
   անդամներ-Ստյոպա Ասլանյան
5. Հասարակական կարգի պահպանման խմբեր- հրամանատար-Աշոտ Գաբրիելյան
   անդամներ-Տիգրան Մնացականյան
   անդամներ-Արթուր Գեղամյան
   անդամներ-Ավետիս Դավթյան
   անդամներ-Աբրահամ Մանգասարյան
6. Գյուղատնտեսական կենդանիների և բույսերի պաշտպանության խմբեր- հրամանատար- Կարեն Հովհաննիսյան
   անդամներ-Կարեն Գաբրիելյան
   անդամներՎարդան Գրիգորյան
   անդամներ-Գառնիկ Թումանյան
7. Բժշկական օղակ-հրամանատար-Գայանե Ղազարյան
   անդամներ-Համլետ Գրիգորյան
   անդամներ-Արուսյակ Հարությունյան
   անդամներ- Ինա Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 11-Ա

«07» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2011Թ. Գ. ԱՄԲԵՐԴ

# ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԻԳՐԱՆ ՍԱՄՎԵԼԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Ամբերդ գյուղում փաստացի բնակվող Տիգրան Սամվելի Պողոսյանը դիմել է, Արմավիրի մարզի Ամբերդ գյուղում Մայիսյան փողոցի թիվ 23 հասցեում գտնվող բնակավայրի, տնամերձ օրինական 1090.0 քմ զբաղեցրած հողամասի և օրինական հողամասի ինքնակամ կառուցված բնակելի տունը և շենք-շինությունները օրինականացնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 12-ին ենթակետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ գյուղ Ամբերդ, Մայիսյան փողոցի 23 հասցեում գտնվող գույքային միավորումների նկատմամբ քաղաքացի Տիգրան Սամվելի Պողոսյանի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը

1090.0 քմ օրինական հողամասի և օրինական հողամասի վրա գտնվող բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:
3. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման Հայաստանի Հանրապետության ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից:
4. Առաջարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Տիգրան Սամվելի Պողոսյանի սեփականության իրավունքի վկայականը սույն որոշման 1-ին կետով նշված հողամասի և շենք-շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար Լ. Վարդանյան

[illegible] թվականի սեպտեմբերի 7
գ. Ամբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10-Ա

«02» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2011թ. Գ. ԱՄԲԵՐԴ

# ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 6-րդ կետով, Մարիամ Գևորգի Քերոբյանի միջնորդությունը հաշվի առնելով, որ չի պահպանվել հողհատկացման հիմքը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի բնակիչ՝ Մարիամ Գևորգի Քերոբյանին պատկանող տնամերձ հողամասի, որի վրա 1995 թվականին կառուցված է բնակելի տուն, Կոմիտասի փողոցի 42 հասցեում 04-008-017-012 կադաստրային ծածկագրի տակ հողհատկացման հիմքերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար՝ Լ. Վարդանյան

2011 թվականի սեպտեմբերի 2
գ. Ամբերդ